# ԿԱՐԾԻՔ

Անրիետա Արաիկի Կարապետյանի՝ «Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ԻԲ 00.01 «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Աշխատանքի արդիականությունն ու անհրաժեշտությունը պայմանավորված է ողջ աշխարհում սոցիալական ցանցերի օգտատերերի թվի ավելացմամբ, առցանց հաղորդակցության հարթակների ակտիվ տարածմամբ: Վերջիններս ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում բազմաթիվ ուսումնասիրությունների առիթ են հանդիսանում օգտատերերի հաղորդակցական առանձնահատկությունների, նախասիրությունների բացահայտման առումով:

Հաղորդակցության սոցիոլոգիան զարգացած տիրույթ է, իսկ ատենախոսն իր աշխատանքի տեսական հատվածում արտահայտել է հաղորդակցության սոցիոլոգիայի տեսանկյունից այսօր առաջին պլան մղված մի շարք խնդիրներ:

Սույն ատենախոսական աշխատանքում արտացոլվում են այնպիսի դրույթներ, ինչպիսիք են հայ օգտատերերի հաղորդակցական նախասիրությունների և սոցիալական ցանցերում հաղորդակցվելու մոտեցումների բացահայտումը, հաղորդակցական տարատեսակ սուբյեկտների հետ հաղորդակցական եղանակների նախընտրելիությունը, լայն տարածում գտած սոցիալական ցանցերում հայ օգտատերերի առանձնահատկությունների արտածումը:

Նպատակի իրագործման համար հեղինակն ուսումասիրության է ենթարկել Մարշալ Մաքլուհանի, Նիկլաս Լումանի, Յուրգեն Հաբերմասի, Էրվինգ Գոֆմանի և մի շարք այլ տեսաբանների աշխատությունները: Ներկայացվել է վիրտուալ սոցիալական ցանցի ընձեռած հնարավորությունները, դրա զարգացման ու առցանց հաղորդակցությունների լայն տարածման հետևանքները:

Հեղինակը աշխատանքում ներկայացրել է հաղորդակցության վերաբերյալ մի շարք տեսաբանների աշխատություններ և վեր հանել այն դրույթները, որոնց հիման վրա իրականացվել է հետազատությունը, մեկնաբանված են հաղորդակցության հիմնական տեսությունները, մոդելները, բաղադրիչները, գործառույթներն ու խոչընդոտները:

Անդրադառնալով Մարշալ Մաքլուհանին, ով շեշտադրում է հաղորդակցական միջոցի սկզբունքային դերը հաղորդակցման բնույթի առումով՝ ատենախոսը համեմատականներ է անցկացնում սոցիալական ցանցերով իրականացվող հաղորդակցության հետ՝ վերջինս համարելով «միջնորդ»: Նպատակի իրականացման համար ատենախոսը քննարկել է նաև հաղորդակցության մի շարք մոդելներ, որոնցից առանձնացրել է Հարոլդ Լասսուելի հնգահարց հաղորդակցական մոդելը, համաձայն որի հաղորդակցությունը կենտրոնացած է հենց արդյունքի վրա:

Հեղինակն իր առջև նպատակ է դրել պարզել հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում, ստեղծել հայաստանյան օգտատերերի հաղորդակցական բնութագրիչներ, տիպաբանել նրանց և այլն, իսկ նպատակի իրագործման համար առաջադրել այնպիսի խնդիրներ, որոնց բացահայտումը լիովին տվել են հետազոտության առջև դրված խնդիրների լուծումները:

Ատենախոսության մեջ կիրառվել են ընդհանուր և հատուկ գիտական մեթոդներ: Հատկանշական է, որ ատենախոսն ընտրել է հենց առցանց եղանակով անկետավորման հարթակ, ինչը թույլ է տվել ստանալ հավելյալ տեղեկություն առցանց հարթակում առավել ակտիվ և ներգրավված օգտատերերի տարատեսակ կատեգորեաների մասին:

Ատենախոսությունն ունի արժեքավոր կողմեր, այդ թվում.

1. Ինչպես նկատելի է թեմային հատուկ գրականության ցանկից, տարակարծությունները կապված առցանց հարթակին վերաբերող հասկանությունների բավականին շատ են: Այս առումով նորույթների տեսանկյունից առավել կարևորներից է հեղինակի կողմից «անցանց» և «առցանց» հաղորդակցությունների սահմանումների հստակեցումը, նմանօրինակ հասկացությունների հիմնավորումը, ինչպես նաև «անցանց հաղորդակցում» եզրույթի շրջանառության մեջ դնելու հանգամանքը:
2. Հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունների բացահայտման միջոցով իրականացվել է օգտատերերի տիպաբանում: Համեմատելով ստացված տիպերը այլ երկրներում առցանց հաղորդակցությունների օգտատերերի տիպերի հետ՝ դուրս է բերվել նոր «թափառող» տիպը, որը բնութագրվում է ամեն պատեհ – անպատեհ առիթով սոցիալական ցանց մուտք գործելու մոտեցումով:
3. Արժեքավոր է նաև հեղինակի եզրակացությունն այն մասին, որ հայ օգտատերերի մեծամասնության համար վիրտուալ սոցիալական հարթակները միջոց են՝ արդեն իսկ առկա ընկերների, ծանոթների հետ շփման համար: Միևնույն ժամանակ,

օգտատերերի մեկ երրորդը նախընտրում է հենց սոցիալական ցանցերը՝ նոր մարդկանց հետ ծանոթանալու և շփվեու համար, ինչն ավելի դյուրին է և նախընտրելի՝ համեմատած անցանց պայմաններում անծանոթների հետ շփման նախաձեռնման հետ:

Թերություններից են.

1. Արժեքավոր կլիներ տարբեր երկրների, մասնավորապես, ՌԴ հայ օգտատերերի հաղորդակցական առանձնահատկությունների առանձնացումը, ինչը նաև հնարավորություն կտար ստանալ համեմատական տվյալներ Հայաստանյան հայ օգատետերերի հետ: Հետաքրքիր կլիներ ներառել հենց ռուսական սոցիալական ցանցերի հայաստանյան օգտատերերին: Ատենախոսը որևէ կերպ չի առանձնացնում տարբեր երկրների հայ օգտատերերին:
2. Ատենախոսության տեսական մասում վերլուծվել է մեծ ծավալի և տևական ժամանակահատվածի նյութ, քննարկվել են մի շարք ամերիկյան և եվրոպական հեղինակների աշխատություններ, սակայն սակավաթիվ են ռուսաստանյան հեղինակները, որոնցից շատերը ևս ունեն սոցիալական ցանցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ: Աշխատանքը կշահեր այս դրույթը հաշվի առնելու և ռուսաստանյան հեղինակներին ներառելու պարագայում:

Այսպիսով՝ ատենախոսության արդյունքում բացահայտվում են հայ օգտատերերի հաղորդակցական ռազմավարությունները վիրտուալ սոցիալական ցանցերում, հայաստանյան օգտատերերի հաղորդակցական բնութագրիչների համաձայն հայտնաբերվում են օգտատերերի տեսակները, բնութագրվում հայ օգտատերերի հաղորդակցական նախասիրությունները, նպատակները, մոտեցումները և այլն: Արժեքավոր են նաև իրականացված եզրակացությունները:

Չնայած նշված թերությունների՝ ատենախոսության մեջ կարևոր ոլորտային հիմնախնդիրների բարձրացումը և ուսումնասիրությունը, դրանց լուծմանն ուղղված մասնագիտական ջանքերն ու ստացված արդյունքները հիմք են՝ կատարված աշխատանքի գնահատման համար: Հեղինակի կողմից հրատարակված յոթ գիտական հոդվածները ևս արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Այսպիսով՝ ատենախոսության մեջ արծարծվող հիմնախնդիրների վերլուծության և լուծման կարևորությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն բավարարում է

թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ ատենախոս Ա. Կարապետյանը՝ ԻԲ. 00.01 «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արմեն Կոլյայի Սահակյան
սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

21.10.2024 թ.

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Կ. Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Գիտական քարտուղար, քաղաքագիտության գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Վ. Հովհաննիսյան